

Handwritten text in blue ink, partially obscured by a white label.

4997

Handwritten text in blue ink, likely a name or title.

Handwritten text in blue ink, likely a name or title.

491.99(077)

17-23

190/2

2010

202 9/11

23

ԿՈՒԹԻՆ ԴԱԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

7 - 24


Դավոյան.

1961 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ԳԻՎՊՏԵՐԵ ԳՐԱՐԱՆԱԿԱՆԵԿԱՆ :

Գրականության և Գրադրության Գրականության և Գրադրության Գրականության և Գրադրության

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ - ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ՆՈՐ ԴՊՐՈՅ՚Ւ



Նախակրթության ամբողջ Դասընթացի համակեղուն դրությամբ Պատկերազարդ Գիրք աշակերտին



ՀՐԱՏԱՐԱԿ

ՍՄԲԱՏ ԳՍԻԹԵԱՆ

Խորասանձեան խան, Սիրբեճի, Կ. Պոլիս

100

491.99(077)
7-23

معارف نظارت جلیله سنک فی ۵ نیسان سنه ۱۳۰۷ تا
نمره ریختنامه سیله طبع اولمشدر

491.99 (077)

7-23

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

ԵՒ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ



Գաւրբանի Գործակալութիւնը ամիսներէ ի վեր ձեռնարկած է հրատարակել զասագրքերու շարք մը, ՆՈՐ ԴՊՐՈՅ անուն, որ կը սպարունակէ նախակրթութեան բոլոր ձևերը, բաց ի արուեստներէ և գեղարուեստներէ :

Աւանդելի նիւթերը ա՛յնպէս բաժնուած են որ ամէն առարկայ, փոխանակ զատ զատ գրքի մէջ ըլլալու, ամբողջը՝ օրական, շաբաթական և ամսական դասերու բաշխուելով՝ տասը Պրակներու մէջ իւրաքանչիւրէն մաս մաս դրուած է. որով, ուսանողը, քանի մը գրքեր ունենալու տեղ, միակ հատորի մը մէջ ամփոփուած պիտի գտնուի որ ամբողջ մէկ ամսուան մէջ պարտի ուսանիլ :

Այս դրութիւն մէկէ աւելի օգուաններ կ'ընծայէ . 1⁰ Աշակերտը շատ մը հատորներով բեռնաւորուելու չի ստիպուիր, այլ ամէն ամիս կը ստանայ մէյմէկ սրակ :

2⁰ Գրամական ինայտղութիւն կ'ունենայ :

3⁰ Կրթական Ծրագիր ու ժամանակացոյց՝ գործնք մինչև ցարդ բոլոր Ազգ. վարժարաններուն մէջ միօրինակ ու կանոնաւոր կերպով գործադրել անհնար եղած է, ՆՈՐ ԴՊՐՈՅի այս դրութեամբ գործարկելի պիտի ըլլան ամեն տեղ և տարուան ամբողջ ընթացքին մէջ : Այնպէս որ այս ինչ դի-

17347-ախ

(37018-62)

8705

2002

դի վարժարանին մէջ այս ինչ օրը այն ինչ ժամուն
ի՛նչ դաս որ կ'աւանդուի, նոյնը պիտի աւանդուի
ուրիշ գիւղերու, քաղաքներու և նաև Պոլսոյ
տարրական նախակրթարաններու համապատաս-
խան դասարանին մէջ, բաւական է որ Ուսուցիչը
հետեւի ՆՈՐ ԴՊՐՈՅԻ Դասընթացքին :

4⁰ Երբ աշակերտ մը ո՛ր և է պատճառով վար-
ժարանէ մը ուրիշ վարժարան երթայ, կամ, երբ
ուսուցիչը փոխուի և այլն, պէտք չպիտի ունենայ
նոր նոր դասագրքեր գնելու : ՆՈՐ ԴՊՐՈՅԻ հա-
մապատասխան Պրակին վրայ պիտի կրնայ իր նոր
յաճախած դպրոցին մէջ ալ իր դասերը շարունա-
կել ընդհատուած տեղէն, բաւ է որ օրերով կամ
շաբաթներով բացակայած չըլլայ դպրոցէն :

5⁰ Թէ՛ ուսուցիչ և թէ՛ ուսանողներ այլ և այլ
հեղինակներու հրատարակած՝ շատ անգամ՝ նիւ-
թի, լեզուի և բաշխումի տեսակէտներով գիրար
հակասող դասագրքերէ պիտի ազատին . և դեռ
ուրիշ բազմադիմի առաւելութիւններ որոնց մա-
սին համոզում պիտի գոյացընեն ամէն անոնք որ
ուզեն ուշի ուշով քննել և գործածել ՆՈՐ ԴՐՈՅ-
Ի Պրակները :

(Այս կէտերը աւելի լուսաբանուած են ՆՈՐ
ԴՊՐՈՅԻ Ա. Պրակին սկիզբը « Քանի մը խօսք »
խորագրին տակ, զորոնք կ'արժէ կարգալ : Նոյն-
պէս « Իւրական »ի 1899 Շրջանի 50, 51 և 52 միաց-
եալ թիւերը) :

Անոնք որ նախանձախնդիր են Ա.զ.զ. վարժա-
րաններու կանոնաւոր ու միօրինակ կազմակեր-
պութեան, անոնք որ կ'ըմբռնեն թէ ի՛նչ նիւթա-
կան ու բարոյական կորուստներ ըրած է ժողո-

Վարժարաններու մէջ այլազան մեթոտներ , զանազան դասադրքեր և պէսպէս ծրագիր ու ժամանակացոյց տնննալէն , անոնք որ Հայ մանուկներու բարոսք դաստիարակութեան ճշմարիտ բարեկամ են , անչո՛ւշտ պիտի համոզուին թէ ՆՈՐ ԳՊՐՈՅԻ շնորհիւ , այո՛ , կարելի պիտի ըլլայ ձեռք բերել այդ բաղձայնած յաջող արդիւնքները . — ժամանակի և դրամի խնայողութիւն՝ կանոնադրութիւն , միօրինակութիւն և ճշգրտութիւն դպրոցապարական ամէն պայմաններու մէջ .

Հետեւաբար , կ'արժէ որ Հայ Ուսուցիչներն ամենալաւով ու շատրութեան առարկայ ընեն ՆՈՐ ԳՊՐՈՅԻ , ուր շատ մը առաւելութիւններ պիտի գտնեն , շատ մը դժուարութիւններ հարթուած պիտի տեսնեն : Իրենց համար պարզ՝ շատ պարզ բան մը պիտի ըլլայ ուսուցումը , դիւրաւ պիտի կրնան ուսումնասիրել ու ըմբռնել դործադրուած մեթոտը , և քանի որ Ազգ. Վարժարաններու արդի դասարանական դրութեամբ « ամէն ուսուցիչ պարտաւոր է նախակրթութեան լոյսը ճիւղերը աւանդել » , այս կամ այն ճիւղին համեմատաբար անընտել ուսուցիչ մը ՆՈՐ ԳՊՐՈՅԻ դրութեամբ պիտի կրնայ այդ ճիւղերուն մէջ ալ յաջողակութիւն ստանալ : Եւ այդէն այդ դասարանական կամ համակերպոն դրութեան սկզբունքն է որ ծնունդ ստած է ՆՈՐ ԳՊՐՈՅԻն որ կը արժեալբէ տնննալ միակ դասատու , միակ դասադիրք և միակ դասարան :

Մեր մէջ , բարեբաղդաբար , կան հմուտ ու ձեռնհաս Ուսուցիչներ որոնք՝ կրթական նոր մեթոտներու հետաքրքիր՝ շուտով կ'որգեցրեն ինչ

որ նպատակներ է մանուկներու արագ զարգացման : Սակայն , կրնան դանտիլ նաև աւանդամուտուցիչներ , որոնք դժուարաւ կը թողուն հինցած՝ անվարկութեան մատնուած դրութիւններն ու դատազրքերը , վասն զի անոնց վարժուած են և չեն ուզեր նորն ընդգրկելու համար փոքր ճիգ մ'ընել : Անա այսպիսիներո՛ւն է որ կոչում կ'ընենք թօթափել նախապաշարունները , յանձն առնել պզտիկ յոգնութիւն մը՝ պրպտելու , զննելու նո՞ր ԳՊՐՈՅի ուղղութիւնն ու ոճը , և զայն ընդունելու համար թեթեւ՝ բայց վերանորոգիչ ու բարերար ճիգ մ'ընել :

Նո՞ր ԳՊՐՈՅը պիտի ծաւալէ ոգին ու դազափարը կրթական Համակերպոն Գրութեան որ Ազգ. Կեդր. Վարչութեան 1893ի Կազմական Կանոնագրով ու 1897ի կրթական Ծրագրով թէև սարսառորիչ եղած էր , սակայն գործադրութեան սատարող լրացուցիչ ձևանարկներ , ինչպէս և համակերպոն դրութեան վրայ հիմնուած դատազրքեր չգտնուելով՝ պարտաւորիչ եղած այդ դրութիւնը չէ ընդհանրացած , միահամուռ ընդունելութիւն մը չէ գտած մեր Ուսուցիչներէն և Գաղտնիկան Վարչութիւններէն :

Նո՞ր ԳՊՐՈՅն է որ , Կազմական Կանոնագրին ու կրթական Ծրագրին իրրև լրացուցիչ և գործադրիչ մասը , կուզայ հաստատել կրթական գործին մէջ որոշ ուղղութիւն , միօրինակութիւն և ճշգրտութիւն :

Չենք առաջարկեր Նո՞ր ԳՊՐՈՅը « փորձել » կամ « աչքէ անցընել » համոզուելու համար անոր օգտակարութեան » ինչպէս կ'ըսեն՝ աւանդական սովորութեամբ՝ անոնք որ նոր երկ մը հրատարակ

կը հաննեն ու շատ անգամ իրենք ալ վստահ չեն անոր արժանիքին նկատմամբ : Գիտակցարար ու կատարեալ հաւատարմութիւն է որ կը յանձնարարենք Հայ ուսուցիչներուն՝ ոչ թէ « առ ի փորձ » այլ միանգամ ընդ միշտ ու աներկրայօրէն ընդունիլ և գործածել ՆՈՐ ԴՊՐՈՅՐ Ազգ. վարժարաններու մէջ, վասն զի անոր մէթոտը, ուղղութիւնը, բաշխումը տարիներէ ի վեր փորձուած՝ և առաւելութիւնն անկասկած : Միայն, կը մնայ Գասարաններուն բաժանումը պատշաճեցընել ՆՈՐ ԴՊՐՈՅՐին և զանոնք ձուլել կազմակերպել, այս նոր ու գերազանց դրութեան համեմատ :

Այս ձեռնարկը պատրաստուած է հեռեւորութեամբ Ֆրանսական Համալսարանի Ուսուցիչ և Գիտութեանց Վարդապետ Ա. Սէնէէզի համանուն գործին (l'École Moderne), և մասնակցութեամբ ծանօթ ու մասնագէտ Ուսուցիչներու : Ինչ ինչ ճիւղերը թարգմանաբար ընդունած ենք, իսկ ուրիշներն ալ (Բաղսագիտական Կրթութիւն, Հայեկեղ. Պատմ. Աշխարհագրութիւն, և Մայրենի լեզու) բոլորովին տարբեր և մեր միջավայրին պատշաճ եղանակով աշխատասիրած ենք : Թէ՛ լեզուի և թէ՛ պարունակութեան կողմէ ջանացած ենք նիւթերու մէջ միօրինակութիւն զնել :

Ինչ չափով պիտի աւանդուին նոյն առարկաները՝ Տարրական Ընթացքի Առաջին Շրջանին մէջ և որոնք պիտի վերապահուին Բ. Շրջանին՝ այս կէտը Գասարանին ընտրողութեան թողուած է, ինչպէս և Շարժական Ժամանակացոյցի պատրաստութիւնը՝ միջավայրին ու եղանակին համեմատ :

ՆՈՐ ԴՊՐՈՅՐ մէջ մշակուած 7 զանազան նիւ-

Թերուն դասաւանդման վրայ ներածական ուսումնասիրութիւն մ'ալ հրատարակած ենք «Բլաթակն»-ի մէջ (1900, Թիւ 43, 21 Նոյեմբեր) : Այդ ներածականը կը պարունակէ իւրաքանչիւր ճիւղի վրայ աւանձին բացատրութիւններ և թեւադրութիւններ, որոնք շատ օգտակար պիտի ըլլան հետաքրքիր ուսուցիչներուն :

Ահաւասիկ այդ ներածական մասը որ լիութի կը պատկերացընէ ՆՈՐ ԳՊՐՈՅԻ ուղին և գաղափար մը կուտայ անոր կուռ պարունակութեան վրայ :

[Ընդհանուր կերպով օգտակար ու պիտանի կը նկատենք որ այս Տարրական Ընթացքի աշակերտները Նախապատրաստական Դասարանի մը հետեւած ըլլան Մանկապարտէզէն վերջը : Այս կէտը շատ լուրջ ուշադրութեան արժանի է, քանի որ մեր կրթական կազմակերպութեան ձեւը՝ Համակերպան Դրութիւնը՝ գործադրուելէ ի վեր այսպիսի Նախապատրաստական Դասարանի մը պէտքն երեւան ելած է (*) :

Ասոր համար է որ ոչիմ Ուսուցիչներուն եւ վարժուհիներուն փորձառութեան ու ընտրողութեան կոչում ընելու պէտք կը տեսնենք, ՆՈՐ ԳՊՐՈՅԻ ընթացքը աւանդելու առթիւ : Աշակերտներուն մտաւոր կարողութիւնը կը տարբերի զբարոցէ գարոց, տեղէ տեղ. Դաստիարակի՞ն կը մնայ ուրեմն կշռել Տարրական Առաջինին և Տարրական Երկրորդ կարգերուն կարողութիւնները և ըստ

(*) Նոյնը նաստատած են ինձ՝ Պոլսոյ ամենէն կանոնաւոր Թաղային վարժարաններու Տնօրէնները, երբ առիթ ունեցայ անոնց կարծիքն ալ շօշափելու : Տեղ տեղ արդէն նաստատուած է այդ Նախապատրաստական Դասարանը :

այնո՞ւ աւանդել նո՞ր ԳՊՐՈՅԻ պարունակած նիւթերը : Դասատուն ի՛նչ կ'որոշէ թէ այս ինչ առարկան ի՛նչ չափով՝ ընդլայնել պէտք է Ա. կարգին համար , և ի՛նչ չափով՝ երկրորդին համար . թէ՛ այլեւայլ հրահանգները , հարցումները , թուաբանական խնդիրները , պատմական , աշխարհագրական , զիտական ճիւղերէն որո՞նք և ո՞րքանը մարտելի են Առաջիններուն համար , և ո՞րքանը Բ. կարգի աշակերտներուն համար :

Այս բանը անհրաժեշտ կը նկատենք՝ նո՞ր ԳՊՐՈՅԻն բովանդակ առաւելութիւնները արժէցընելու համար :

Հիմա , հակիրճ ծանօթութիւններ ասնք աւանդելի առարկաներուն վրայ :

1. Բարոյագիտութիւնը մասնաւոր աեղ մ'ունենալու է դպրոցական ուսումներուն մէջ : Ուրիշ ամէն ճիւղեր տղոց իմացականութեան և յիշողութեան կը վերաբերին , իսկ Բարոյագիտութիւնը՝ անոնց սրտին ու խղճին : Դպրոցին միակ նպատակը չէ ուսեալ ազաք հասցընել , այլ ամէն բանէ առաջ մանուկին միտքը ուղղել գէպի բարին : Դաստիարակին պաշտօնը չէ միայն աշակերտներուն սորվեցընել ժամանակագրական ու Աշխարհագրական նիւթերը , կամ Թուաբանութեան ու Քերականութեան գործնական կանոնները : Անոր պարտքն է նաև մանուկին հոգիովն զբաղել : Տղոց միայն կրթութիւնը չէ յանձնուած Ուսուցչին , այլ նաև անոնց դաստիարակութիւնը : Արդ՝ Բարոյագիտութեան սկզբունքներն են որ կը կազմեն դաստիարակութեան ամէնէն ամուր հիմը . այդ սկզբունքները կարելի եղածին չափ ուսման հետ խառ-

նկու լծորդելու է : Ասոր համար է որ Բարոյա-
զիտութեան վրայ դրած ենք նիւթեր՝ խօսակցու-
թեան , մանրավէպի կաժ առածներու ձեւով , զո-
րոնք օրինակել տալով մեկնաբանելու է : Այս
նիւթերուն մէջ որոշ կարգ ու դադափարի շարք
զնել կարեւոր չէր , ու նաև կրկնութիւնները որ
կան , նպատակ ունին շարունակ յեղեղելու , տար-
բեր ձեւով , պարտականութեան , անձնուիրու-
թեան , բարութեան և այլ շինիչ դադափարները :
Այդ կրկնուած սկզբունքները սլոտի բլլան տղոյ
հետեւելի ուղին՝ իրենց ամբողջ կեանքին մէջ :
Առաջին տպաւորութիւնները անջինջ կը մնան և ,
ասոր համար , կանուխէն սկսելու է տպաւորել
բարոյականի տարբերը՝ տղոյ հասողութեան աս-
տիճանով :

2. Քաղաքացիական կրթութիւնը , Տարրական
կարգերու համար պարզ ծանօթութիւններ են մի-
այն : Ջանադինք տղուն հասկնալի ընել ու մանա-
ւանդ մեր միջավայրէն քաղել ամէն ինչ որ պէտք
է սորվի այդ շրջանին մէջ : Մեր ուսուցիչներուն
համար ալ ուսման նոր ճիւղ մ'է աս , որուն վրայ
կ'արժէ որ մտածեն , խորհրդածեն ու ջանան բան
մը չպակսեցնել անոր շահեկանութենէն : Բաւա-
կան է որ տղուն հասկցընեն թէ իր պրած կեան-
քին վերաբերող նիւթ մը և նոյն խակ իր ընտանե-
կան , ընկերական ու քաղաքային շրջանակներուն
ուսումնասիրումն է Քաղաքացիական կրթութիւնը :

3. Պատմութիւն աւանդելու համար , պարտա-
ւոր էինք Բրիտանոսի կեանքէն սկսիլ ու քրիստո-
նէութեան մէջ կրօնական-ընկերական և մեր գրա-
կանութեան տեսակէտով նշանաւոր եզոզ դէմքերն

ու դէպքերը ներկայացընել: Ուսուցիչներս' ըն անկ է խօսիլ պատմական այդ շրջանէն առաջ ու վերջը կարեւորութիւն ունեցող անձերու և թուականներու վրայ, զորոնք զանց ընել հարկ էր եւ հարկեցուցիչ: Այդ աւանդական մասը բերանացի ուսման առարկայ ընել կարելի է:

4. Աշխարհագրութիւնը միայն անհրաժեշտ պատկերներով ներկայացընել կարելի եղաւ. հոս ալ ոչ զրինք որ ուսուցումը, բացառութիւններն ու օրինակները նոր ու հասկանալի ըլլան: Գասատուն ի՛նչ լաւ կ'ըլլայ որ կրկնապատկէ օրինակները՝ գործնական շունչ մը դնելով անոնց մէջ:

Չենք խոստանար առ այժմ՝ ձեռնարկել Աշխարհացոյց քարտէսներու պատրաստութեան: Բայց մեզի խորհուրդ հարցընող ուսուցիչներուն պատրաստ ենք ցոյց տալ և հայթայթել լաւագոյն քարտէսները:

5. Թուաբանութիւնը որ՝ Մայրենի Լեզուէն վերջը՝ կարեւորագոյն ճիւղն է, այս գրքին մէջ բուրովին նոր ու աստիճանական եզանակով (Systematique) մշակուած է: Առանց շատ մանկական եզանակի մը հետեւելու, որ կը պատշաճի Մանկապարտէզի կարգերուն, ինչպէս եւ նախապարտատական Գասարանին (որուն վրայ խօսեցանք այս ներածական Բաժնին սկիզբը), ջանացած ենք ըստ բնագրին, պարզագոյն ու միշտ համակեղծօրն դրութեան մը հետեւիլ: Տեսական մասը, օրինակները, հարցումները, խնդիրները, եւ այլն՝ այնքան դիւրահասկանալի են որ, նոյն խօսք առանց Բանալիի օգնութեան, Ուսուցիչները պիտի կրնան հասկընալի ընել դասը՝ ի հարկին գործածելով

(թիւերու ծանօթութիւնը տպաւորելու համար) ո՛ր
և է թուելի նիւթ , ինչպէս գրիչ , լուքիայի հա-
տիկ , գնտակ , Լուայն : Յանձնարարելի է նաև որ
այս դասին վրայ ամէն վարժութիւն ու ծանօթու-
թիւն՝ գրատախտակի վրայ կատարուի :

6. Նախնական գիտութիւնները, այս Տարրական
ընթացքին մէջ , ընդհանրապէս իրագիտութեան
դասեր են : Բայց քանի որ մեր մէջ գիտական ու-
սումները ետ մնացած են , անհրաժեշտ է ամէնէն
աւելի հոգ տանիլ : Այս ճիւղին համար պատկեր-
ներ եւլն. փորագրել տալու գոհողութիւնը յօժա-
րութեամբ յանձն առինք , բայց կարեւոր է ունե-
նալ դասարանին մէջ Մարդակազմութեան, Բնա-
պատմութեան եւլն. Տախտակներ ու Պատկերներ :
Աս ճիւղին մէջ պիտի աւանդուին նաև բուսա-
բանական, կենդանաբանական և առողջաբանական
գիտելիքները :

7. Մայրենի լեզու անունին տակ ՆՈՐ ԳԼՊ-
ՐՈՅԻՆ մէջ կը կատարուի հայ լեզուի ուսման նպաս-
տող ամէն վարժութիւն՝ գործնական ձևով մը : Եւ
ինչպէս Բիւրակնի 37 թիւով(*) բացատրած ենք, այս
ճիւղը կ'ընդգրկէ քերականական կանոններէ ու գի-
տելիքներէ զատ, նաև բազմաթիւ ու այլազան հրա-
հանգներ եւ վարժութիւններ . բառերու պաշտօն-
ները , բառակազմութիւնը , նմանաձայնները , հա-
մանիչները , հականիչները , համասերները , բառե-
րու առումները , նախադասութեան և շարագա-
սութեան վրայ շահեկան հրահանգներ , գիւտեր
եւլն, մտամարդիկ ոճով մը որ աշակերտին համար
թէ՛ զբօսանք և թէ՛ իմացական զարգացման սա-
տարող մարզանք մը պիտի բլլայ :

(*) Տե՛ս Բիւրակն, 1900, Թիւ. 37, էջ 577 :

Այս է կարծիքը հեղինակաւոր անձերու : այս է փորձաւութեան բերած վճիռը :

Բայց , շմոռնանք յարեւ , թէ Քերականութեան ուսումը աւանդական կարգէն բոլորովին տարբեր ոճով մը կը ներկայացուի . այսպէս՝ հոլովները բացերուն մէջ՝ բառերու պաշտօնները աւանդելու առթիւ . բայերը՝ շատ պարզ , ամփոփ ու համադրական բաշխումով մը . շարադասութիւնը՝ նոյն խակ առաջին դասերէն սկսելով , եւ այլն :

Պզտիկ տղոց յատկացուած այսպիսի դասադրքեր յաւէտ պարտին պարունակել վարժութեան նիւթեր , քան կանոններ , և ասոր համար է որ այնքան քիչ անդ մը տուած ենք անսականին ու յաճախած ենք վարժութիւններն ու հրահանգները : Մեր մէջ գրեթէ միշտ կարծուած է որ Քերականութիւնը արուեստական քառերու սահմաններու գիտութիւնն է . Ի՞նչ է ամսկսելը , ի՞նչ է գոյակսելը , ի՞նչ է տեղադրելը , ի՞նչ է բայը եւ այլն : Ո՛չ , յաւէտ պէտք է ըլլայ լեզուին բառերուն ու ձևերուն գործնական գիտութիւնը՝ գաղափարներ բացատրելու իրքեւ միջոց : Արուեստական բառերն ինքնին՝ վարժութեամբ , կրկնութեամբ կը սորվուին ընթացքին մէջ և ոչ թէ գոյ ընելով :

Շատ վարժութիւն , շատ հրահանգ՝ առիթ տուող ամէն կերպ բառերու և խօսքերու կապակցութիւններ ընելու , կապուածները քակելու , տարբերք յօդաւորելու : Ահա գործնական Քերականութիւնը — Ընդհանրացումները կրնան հետևողութիւն վարժութիւններէն :

Ուստի խեղճ բան մը պիտի ըլլայ եթէ Պ. Պ. Ուսուցիչները սրուած կանոնները մէկիկ մէկիկ գոյ ընել տան պզտիկ տղաքներուն՝ խզի կատարեալ գոհունակութեամբ թէ տղաքները փիլիսոփայ կը դարձնեն . . . :

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՆՈՐ ԴՊՐՈՅԻ Բաժանորդագրութեան պայմաններն են.

1⁰. Գարոցական տարին 10 ամիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՅԻ ալ, ինչպէս ըսինք, տասը Պրակներու բաժնուած է, մէն մի ամսուան համար մէկ Պրակ հաշուելով :

Ամէն մէկ Պրակ պիտի ըլլայ առ նուազն 5—6 տարագրական թերթ կամ 80—100 էջ և նոյն իսկ աւելի ալ : Պիտի պարունակէ, նիւթերուն համեմատ, գեղեցիկ պատկերներ որոնց մեծ մասը յատկապէս ՆՈՐ ԴՊՐՈՅԻ համար փորագրուած :

2⁰. ՆՈՐ ԴՊՐՈՅԻ 10 Պրակներու բաժանորդագրինն է 25 զրշ. Պոլսոյ և Գաւառներու համար, 8 Ֆրանք կամ 3 Բուսլլ՝ արտասահմանի համար :

3⁰. Գաւառները զրկուած Պրակներուն փոսթի ծախքը Գործակալութիւնը կը հոգայ :

4⁰. Տասն օրինակի բաժանորդ զրուողը 1 օր. նուէր կը ստանայ :

5⁰. Մէկ Պրակի գինն է 5 (հինգ) զրշ.

6⁰. Պրակ առ Պրակ գնողին գեղջ չկայ :

7⁰. Տասը Պրակներն ամբողջանալուն պէս, պիտի դադրի բաժանորդագրութիւնը և այն ատեն անոնց գինը պիտի ըլլայ 40 զրուշ, 10 ֆրանք, բացի փոսթի ծախքէն :

8⁰. Պրակները պիտի ըլլան ամսական, երեք ամսական միացած, կամ 5 ական Պրակով 2 հատոր :

ՆՈՐ ԴՊՐՈՅԻ Ա. Պրակը «Բիւրակն»ի 1900 թիւ 33—40ին մէջ իբր նոնջ հրատարակուած ըլլալով՝ այլ ևս այս կամ այն Պրակէն նոնջ չենք զրկեր ո՛ր և է անձի, մանաւանդ որ միակ Պրակի մը

պակսելովը ամբողջ Հաւաքածուն կը խանգարի ի վնաս Բաժանորդի մը :

Տպագրութիւնը, պատկերները, թուղթը, կաղմը, նիւթերու բաշխումը և տառերու ընտրութիւնը կատարուած է մասնաւոր խնամով :

Աշակերտներու դիւրութեան համար, Ուսուցիչները կրնան, փոխանակ 25 դրշ. բաժանորդագլինը մէկ անգամէն գանձելու, շարաթականի դրութեամբ քիչ քիչ հաւաքել և երբ 25 դրուշը ամբողջանայ, այն ատեն մեզի հասցընել՝ միշտ ջանալով 10 ական բաժանորդագլին մէկէն զրկել, 11 րդ օրինակ մը նուէր ստանալու համար զոր կը յատկացընեն է՛ն ուշիմ աղքատ ուսանողին :

ՆՈՐ ԴՊՐՈՅԻ Ա. Բ. Գ. Գ. Պրակները արդէն լոյս տեսած ըլլալով՝ լիովին զազախար կուտան զործին վրայ: Յաջորդ Պրակներն ալ շարաթը մէկ կամ երկու ֆունայի հաշուով պարբերաբար և անընդհատ պիտի հրատարակուին մինչև 1901 Սեպտեմբեր (*):

Պ. Պ. Ուսուցիչները թող փութան քննել ՆՈՐ ԴՊՐՈՅԸ և բնտելանալ անոր ուղղութեան, որպէս զի 1901—1902 դպրոցական ընթացքին մէջ կատարեալ զիտակցութեամբ սկսին ՆՈՐ ԴՊՐՈՅՈՎ զասախօսել: Բայց, ազէկ է որ այժմէն որոշեն թէ ամէն մէկ դասարանի մէջ քանի՞ աշակերտ պիտի կրնան բաժանորդ գրել, որպէսզի ի վիճակի ըլլանք ըստ այնմ գոհացում տալ խնդրանքներուն :

Հարցում մը. — Բայց արդեօք Գաւթեան Գործակալութիւնը իր այս կարեւոր ձեռնարկին ալ պիտի կրնա՞յ յաջողապէս ի գլուխ հանել . . . :

Աս հարցումին կը պատասխանենք, 1⁰ թէ հան-

Ե. Զ. Պրակներն ալ մամուլի տակ են :

բութիւնը երբեք առիթ չէ ունեցած գանգատելու որ մեր այս կամ այն ձեռնարկը կիսատ թողած ըլլանք: Փորձը ցոյց տուած է թէ մեր ս'ր և է բարոյական թէ նիւթական խոստումը անհրաժեշտ կերպով գլուխ հանած ենք « ի գին ամէն զոհողութեան » : Եւ աւելորդ չէ ըսել թէ ՆՈՐ ԴՊՊՅԻ 10 Պրակներուն ծախքն ալ այժմէն ապահովուած է: Աս՝ զործին դրամական մասին համար:

2⁰ Գալով 10 Պրակին դասերուն կամ պարունակութեան, աս ալ ոչ նուազ երաշխաւորուած է, քանի որ նիւթերն արդէն մշակուած պատրաստուած ու դասաւորուած ըլլալով՝ կը մնայ միայն անոնց տպագրական աշխատութիւնը որ լոկ նիւթական գործ մ'է և խոստացուած թրականին պիտի կրնայ աւարտիլ, որչափ կը ներեն մարդկօրէն հաշիւները :

Վստահութեամբ կը հրաւիրենք ուրեմն Հայ Ուսուցիչները՝ իրենց բոլոր բովանդակ աջակցութիւնն ու ջանքը նուիրել Նոր Դպրոցին ծաւալման և կը խնդրենք այս Շրջաբերականը տարածել և ծանօթացընել իրենց քաղաքին ու մօտակայ կրթական շրջանակներուն մէջ, ինչպէս և ժողովրդին ամէն խաւերուն զգացընել ազգ. դաստիարակութեան նոր եռանդով մը մղուած տալու պէտքը՝ առիթ. ՆՈՐ ԴՊՊՅԻ հրատարակութեան որ կը հաւատանք թէ իր մասնաւոր տեղն ու դերը պիտի ունենայ Հայ դպրոցական մատենագրութեան մէջ:

ՍՄԲԱՏ ԳԱԽԹԱՆ

Կ. Պոլիս, 1901 Մայիս

ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆՆԵՐԸ

		Գում.
1. Ա. Վարժուժիւն Մանկանց	7րդ Տխոյ	4
2. Բ. » »	5րդ »	5
3. Գ. » »	5րդ »	5
4. Տարրական Քերականութիւն	5րդ »	2
5. Լրացուցիչ Դասընթացք	2րդ »	3
6. Փունջ, Աշխարհաբար Հաւարածոյ	4րդ »	3
7. Փնջակի, Պատկերազարդ	4րդ »	1,40
8. Երկրորդ Փունջ	2րդ »	6
9. Գործն. Ընծացք Շարադրութեան	3րդ »	3
10. Բանալի Շարադրութեան	2րդ »	7
11. Ընտելարան Հայ լեզուի	3րդ »	2
12. Ակզբունք Համաձայնութ. և շարադասութեան		3
13. ALPHABET FRANCAIS	2րդ Տխոյ	2
14. Տար. Ընծացք Կրօնի Վ. Քն. Ապոստոլականի	3րդ »	2
15. Տար. Ընծացք Այրբեւարան (նոր սօմոյ)	3րդ »	0,20
16. Յայտագիր Դամբեան Գործակալութեան	5րդ »	2
17. Ծաղկաբաղ Հաւարածոյ, Միջին Շրջան	2րդ »	4
18. Գպրոցավարութիւն, գործ Emerson E. White ի		5
19. Առածապատում Հ. Պեննէնանի		5
20. Համասօտ Կրօնագիտութիւն Ա. Հարէլեանի		3
21. Արտիս ձայնք, բերմուածներ, Բ. Բարսեղեանի		5
22. Նուէր Հայ մանուկներուն, Ս. Գումեանի		1,20
23. Դաստիարակութիւն Աղջիկներու, Յուսիկ Վրդ.		3
24. Հրոյէյ, Դիտումիւններու վրայ դասեր, Գ. Անդր.		5
25. Դաստիարակութիւն Պատանիներու, Յուսիկ Վրդ.		3
26. ԲիւիՍՄԿՆ Լրացիր, 1898ի հաւարածուն, Օսմ. լիբա		2
» » 1899ի » » »		1
» » 1900ի » » »		1/2
27. Աշխարհագրութիւն Օսմ. կայսրութեան Գ. Խաչկունց		3
28. Քերթուածներ, Յակոբճան		5
29. Տղոց Կրօնագիտութիւն, Մկրտիչ Վրդ. Աղաճունի		4
30. Թուար. Մեղրական դրութեան		5
31. Առաջնորդ Անոց. Լեզուի, Յ. Վարժապետեան		5
32. Խլանձէլին Լանկիէլլօ, Տ. Լ. [Թերթճն Բիւրակիի]		5
33. Օսմ. Տագաչախութիւն Ա. Յ. Աւարիկեան		5
34. Նոր Գպրոց, 10 Պրակի բաժանորդացին		25
» » » Արտասանեան 8 ֆրանք. (3 բուլլ)		5
35. Երջարերական-Յանուցագիր ՆՈՒ ԳՊՆՈՅԻ		5

Պատասխանի խաւն, Սիրիանի, Կ. Պոլիս

Տպագրութիւն Մ. ՍԱՐԸԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Պապր-Ալի մասսէսի, Թիւ 38

2013

4997

